ԲԵՐՔԱԲԵՐԻ ԿՈՒՐ-ԱՐԱՔՍՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԸ

Ս. Ն. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Կուր-արաքսյան մշակույթի ուսումնասիրման համար առանձնահատուկ կարևոր տեղ են գրավում Հայաստանի Հանրապետության տարածքի հուշարձանները։ Քանի որ դրանց էլ ավելի մանրակրկիտ և խորն ուսումնասիրությունը կարող է նոր արժեքավոր տեղեկություններ տալ ինչպես կուր-արաքսյան մշակույթը կրողների նյութական և հոգևոր կյանքի, այնպես էլ մշակույթի հետ կապված որոշակի պրոբլեմային հարցերի վերաբերյալ[1]։

Մեր կարծիքով, Հայաստանի տարածքի վաղ բրոնզեդարի կուր-արաքսյան մշակույթին պատկանող հուշարձանների ուսումնասիրումը անբավարար է։ Ցնայած հայտնի են բազմաթիվ հուշարձաններ՝ Շրեշ-բլուր, Մոխրաբլուր, Շենգավիթ, Այգեվան, Ջրահովիտ, Հառիճ, Քեթի, Ամասիա, Հոռոմ, Կառնուտ, Սառնաղբյուր, Տիգնիս, Էլար, Գառնի, Բերքաբեր և այլն, սակայն դրանցից և ոչ մեկում ամբողջական պեղումներ իրականացված չեն, իսկ սիստեմատիկ պեղումներ տարվում են սահմանափակ հուշարձաններում։ Վատ են ուսումնասիրված հատկապես դամբարանադաշտերը և դամբարանային նյութը։ Մինչդեռ, դամբարանադաշտերի ամբողջական պեղումների իրականացումը և դամբարանային նյութի խորն ու համակողմանի ուսումնասիրումը կարող է շատ արժեքավոր տեղեկություններ տալ կուր-արաքսյան մշակույթը կրողների հոգևոր պատկերացումների՝ կրոնի, պաշտամունքի ու հավատալիքների, ինչպես և նյութական կյանքի վերաբերյալ։

Բնակատեղիներում և դամբարաններում հայտնաբերվող հոգևոր պատկերացումներ արտացոլող նյութական արժեքների փոխկապակցված ուսումնասիրումը, ինչպես և թաղումների ժամանակ կատարված ծիսական արարողությունների եղած հետքերի մանրակրկիտ ուսումնասիրումը կարող են գիտական մեծ ինֆորմացիա տալ կուր-արաքսյան մշակույթը կրողների մոտ դեռևս մեզ անհայտ ծեսերի ու ծիսական արարողությունների, հոգևոր պատկերացումների վերաբերյալ։ Պաշտամունքի ուսումնասիրման տեսանկյունից մեծ արժեք են ներկայացնում հատկապես դամբարաններում հայտնաբերվող հոգևոր պատկերացումներ արտացոլող զարդամոտիվներով խեցեղենը։

Կուր-արաքսյան մշակույթին պատկանող բնակատեղիների և դամբարանադաշտերի փոխկապակցված ուսումնասիրումը գիտական էլ ավելի մեծ ինֆորմացիա կարող է տալ այս մշակույթի հետ կապված պրոբլեմային հարցերի, ինչպես նաև կյանքի ու կենցաղի հետ կապված այլ ոլորտների վերաբերյալ։

Այս տեսակետից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Բերքաբերի հնագիտական հուշարձանը, որը գտնվում է Իջևանի շրջանում՝ Ջոդազ

---

1 *Կուր-արաքսյան մշակույթի կարևորագույն հարցերից մեկը այդ մշակույթի անհետացման մասին եղած տեսակետներն են։ Այդ տեսակետները բազմաբնույթ են և այդ հարցի վերաբերյալ միասնական, վերջնական ճիշտ դիրքորոշում գրեթե չկա։ Այս մասին տե՛ս Է. Վ. Խանզադյան, Գառնի, IV, Երևան, 1969, էջ 116—123,* Г. А. Меликишвили, Возникновение хеттского царства и проблема древнейшего населения Закавказья и Малой Азии (Вестник древней истории *(այսուհետև՝* ВДИ), 1965, № I. с. 16—20); Л. Вулли, Материалы трех глав 2-й части I тома «Истории научного и культурного развития человечества» (Вестник истории мировой культуры, 1957, № I, с. 101—102); Р. М. Мунчаев, Кавказ на заре бронзового века, М., 1975, с. 413—414.

գետի վրա կառուցված ջրամբարի հարավային ափին, Բերքաբեր գյուղից մի փոքր հյուսիս-արևմուտք։ Այս հուշարձանը գիտությանը հայտնի դարձավ Ջողազի ջրամբարի շինարարության ընթացքում։ Հողային աշխատանքների հետևանքով ոչնչացվել և ավերվել էին մեծ քանակությամբ կուր-արաքսյան մշակույթին պատկանող դամբարաններ։ Այստեղ հայտնի է նաև բնակատեղին, որը գտնվում է ջրամբարի հարավային ափին՝ Մեյդաններ և Մուղնի կոչվող տարածքներում։ Ջրամբարի շինարարության ժամանակ և հետագա տարիներին ջրի ափամերձ շրջանի ողողման հետևանքով հուշարձանի մի մասը ավերվել է։ Ավերված մասում, որտեղ առաջացել է ուղղահայաց մեծ կտրվածք, պարզ նշմարվում է մշակութային շերտի հզորությունը, որը տեղում հասնում է 2—3 մետրի։ Ամբողջությամբ վերցված, բնակատեղին ջրամբարի ափամերձ շրջանով ձգվում է շուրջ մեկ կմ երկարությամբ, որի հարավային եզրով էլ ձգվում է դամբարանադաշտը։ Դամբարանադաշտի արևելյան եզրը հասնում է մինչև Գիլասքու հող վայրը, որտեղ բացվել էին մեծ քանակությամբ դամբարաններ։

1981 թ. ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Հայաստանի պատմության պետական թանգարանի կողմից Բերքաբերում կատարվեցին պեղումներ։ Պեղումները հիմնականում կենտրոնացվեցին դամբարանադաշտի արևելյան հատվածում, որտեղ և պեղվեց 22 հիմնահողային թաղումներով դամբարաններ։ Իսկ նշված դամբարաններից շուրջ 200 մետր արևմուտք պեղվեցին երկու քարարկղային թաղումներով դամբարաններ, որոնք հիմնականում ավերված էին։ 1981 թ. այստեղ, պեղված հիմնահողային թաղումներով դամբարաններից 250—300 մետր արևելք, պեղվեց նաև բեռնյան համարվող մշակույթին պատկանող դամբարանաբլուր[2]։

Բեռնյան մշակույթին պատկանող հուշարձանի հայտնաբերումը Հայաստանի տարածքում խոշոր հնագիտական հայտնագործություն է հայ հնագիտության համար և, ինչպես կտեսնենք, մեծ նշանակություն ունի կուր-արաքսյան մշակույթի հետ կապված որոշ պրոբլեմային հարցերի լուծման տեսանկյունից։

Բերքաբերում պեղված և պատահականորեն բացված ու հետազոտված կուր-արաքսյան մշակույթին պատկանող դամբարաններն ըստ իրենց կառուցվածքի երկու տեսակի են՝ հիմնահողային և քարարկղային[3]։

Հիմնահողային թաղումներով դամբարանները ըստ դամբանաթմբի կառուցվածքի բաժանվում են երեք խմբի։ Առաջին խմբի հիմնահողային թաղումներով դամբարաններն ունեն քարե պատյան, որոնք արտաքինից ուռուցիկ են, կտրվածքում կամարաձև, իսկ վրան ունեն հողի լիցք (թումբ, աղ. I, նկ. 1)։ Այս դամբարանների քարե պատյանի տրամագիծը հասնում է 3—4 մ-ի, իսկ խորությունը 2,5 մետրի։ Այսպիսի դամբարաններ բացվել էին Մեյդաններ տեղամասում՝ ոռոգման համար օգտագործված առվի խորացած հունի մեջ։ Պետք է ենթադրել, որ նման կառուցվածքի խոշոր դամբարաններում թաղվել են ցեղի կամ համայնքի ուներոր ներկայացուցիչներ։ Դամբարանադաշտում այսպիսի դամբարանները պետք է որ սակավ լինեին և այս տեղամասում պետք է դերակշռեին շարքային, փոքր, միայն հողաթմբով դամբարանները։ Մեր այս ենթադրությունը հաստատվեց, երբ 1986 թ. այստեղով անցկացվող ջրատարի շինարարության ժամանակ բացվեցին մի քանի

---

2 Այս մասին տե՛ս Ս. Ե. Գասպարյան. Դամբանաբլուրի պեղումներ Իջևանի շրջանի Բերքաբեր գյուղում (Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), Երևան, 1987, № 1, էջ 229)։

3 Դամբարանների կառուցվածքի և թաղման ծեսի վերաբերյալ հեղինակը զեկուցում է կարդացել 22 ԳԱ հնագիտության և ազգության ինստիտուտում կայացած գիտական կոնֆերանսում (տե՛ս Երիտասարդ գիտնականների VII կոնֆերանս, զեկուցումների թեզիսներ, Երևան, 1988, էջ 4)։

տասնյակ դամբարաններ, որոնց մեծ մասը հիմնովին ավերվել էին։ Այս դամբարանների մանրակրկիտ զննումը ցույց տվեց, որ սրանք շարքային, միայնական թաղումով, առանց քարե լիցքի և պատյանի հիմնահողային թաղումներով դամբարաններ են։



Աղ. I

Հիմնահողային թաղումներով դամբարանների երկրորդ խմբի դամբանաթմբերն ունեն հետևյալ կառուցվածքը։ Սրանք դամբարանախցերի վերին հորիզոնական չափերին համապատասխան ունեն գլաքարի քառանկյուն եզրային շարվածքներ, իսկ այս քառանկյուն շարվածքների մեջ քարի կույտեր, որոնց վրա արվել են հողաթմբեր (աղ. I, նկ. 2 և 3)։ Դամբանաթմբի այսպիսի կառուցվածքով դամբարաններ պեղվել են դամբարանադաշտի արևելյան հատվածում՝ Գիլասքու հող տեղամասում։

Երրորդ խմբի դամբարանների դամբանաթմբերն ունեցել են միայն հողի լիցք։ Այս խմբի դամբարանների մի մասում քարի լիցքը գտնվում էր ոչ թե դամբարանախցի վերին մասում, այլ անմիջապես թաղման վրա (աղ. I, նկ. 4), իսկ մի մասում ընդհանրապես բացակայում էր քարի լիցքը։

Հիմնահողային թաղումներով դամբարանները գտնվում են այնպիսի տարածքում, որը դարեր շարունակ օգտագործվել է որպես վարելահող և, հետևաբար, այդ դամբանաթմբերը չէին կարող պահպանվել։ Միայն որոշ դամբարանների դամբարանախցերի վրա պահպանված քարե լիցքն է, որ ենթադրել է տալիս դամբանաթմբերի գոյությունը։ Դատելով պեղված դամբարանների հեռավորություններից, որոնք կազմում են 3—7 մետր, կարելի է ասել, որ դամբանաթմբերը եղել են բավականին փոքր չափերի։

Դամբարանադաշտի պեղված մասում նկատված ուշագրավ փաստերից մեկն այն է, որ այստեղ դամբարանները ունեն կանոնավոր դասավորություն

և շարք են կազմում։ Մեր կարծիքով այս օրինաչափությունը տարածվում է ողջ դամբարանադաշտի վրա։ Իսկ դա նշանակում է, որ, եթե իրականացվեին ամբողջ դամբարանադաշտի պեղումները, ապա ժամանակագրական տեսանկյունից վերցրած, մենք մեր ձեռքի տակ կունենայինք մի միջոց, որով կարելի կլիներ ճշտել և պարզաբանել բազմաթիվ հարցեր՝ տարբեր ժամանակներում մշակութային փոխառնչությունները այլ մշակույթների հետ, դրա հետ կապված՝ կավամանների ձևերի, նրանց զարդամոտիվների, թաղման ծեսի, դամբարանների կառուցվածքային ձևերի զարգացման ժամանակագրական պատկերը։

Այժմ քարարկղային թաղումով դամբարանների մասին։ 1981 թ. մեր կողմից պեղվել է երկու քարարկղային թաղումով դամբարան։ Այս դամբարանները բացվել էին ջրամբարի շինարարության հետ կապված ճանապարհաշինական աշխատանքների ժամանակ և հիմնականում ավերված էին։

Առաջին դամբարանի քարարկղի շարվածքը միաշար էր՝ շարված միջին մեծության հարթավուն ճակատով գետաքարերից (աղ. I, նկ. 5), իսկ երկրորդինը մանր, հարթավուն գետաքարից էր և ուներ աղյուսաշար շարվածք (աղ. I, նկ. 6)։ Այս երկու դամբարանների պահպանված քարե պատերը կորավուն էին[4]։ Սրանք հավանաբար ունեցել են պայտաձև կառուցվածք։ Չնայած դամբարանները հիմնականում ավերված էին, այսուհանդերձ, պարզ նշմարվում էր նրանց վրա եղած դամբանաթմբի գոյությունը (աղ. I, նկ. 5 և 6)։ Ըստ երևույթին դամբանաթմբերը ունեցել են նաև քարե պատյաններ, որոնք չէին պահպանվել։

Կուր-արաքսյան մշակույթը կրող ցեղերի հոգևոր պատկերացումների և պաշտամունքի մասին որոշակի տեղեկություններ են տալիս հատկապես այստեղ պեղված դամբարանները և դամբարանային նյութերը։ Չնայած պեղված դամբարաններն իրենց քանակով մեծ չեն և մեծ մասի վերին շերտերը հեռացվել էր ջրամբարի շինարարության ժամանակ, այնուամենայնիվ, հաջողվեց պարզել թաղման հիմնական ծիսակարգը։

Այստեղ պեղված հիմնահողային թաղումներով դամբարաններում թաղման ժամանակ օգտագործվել է ծիսական կրակ, որը հավանաբար պաշտամունքային տնտեսական կլոր տիպի օջախներից բերվել է Շենգավիթից հայտնաբերված կլոր, շարժական օջախիկի տեսակի[5] օջախիկներով։ Ծիսական կրակը ծիսական նպատակներով օգտագործելուց հետո թափվել է դամբարանափոսից հանված հողի վրա, կամ՝ հողը դամբարանախուցը լցնելու ժամանակ մաս առ մաս լցվել դամբարանափոսը, որի ապացույցն են բազմաթիվ դամբարանների դամբարանախցերի հողի լիցքի մեջ հայտնաբերված փայտածխի կտորները (աղ. I, նկ. 2)։

Որոշ դամբարաններում, անմիջապես թաղման վրա, արևմտյան կողմում, հայտնաբերվել է 25—30 սմ տրամագծով մոխրի բարակ շերտ (աղ. I, նկ. 2), որը, մեր կարծիքով բերվել է բնակավայրի կլոր օջախների մոխրից։ Թաղման ժամանակ մոխրի օգտագործումը ծիսական նպատակով հավանաբար խորհրդանշել է կյանքի մայրամուտը։ Ենթադրում ենք, որ մոխիրը բերելու ժամանակ օգտագործվել է Շրեշ-բլուրից, Շենգավիթից և Էլարից հայտնաբերված օջախիկ-պատվանդանների[6] տեսակի կավամաններ։

---

4 Կորացող պատով պայտաձև քարարկղային դամբարաններ հայտնի են Էլարից (տե՛ս Է. Վ. Խանդաղյան, Էլար-Դարանի, Երևան, 1979, էջ 36—37)։

5 Այս օջախիկը իր արտաքին տեսքով նմանվելով բնակարանների տնտեսական պաշտամունքային օջախներին, իր չափերով բավականին փոքր է և ծառայել է ծիսական նպատակով։ Այս տեսակի թե՛ մեծ և թե՛ փոքր օջախները կապվում են արևի պաշտամունքի հետ։

6 Է. Վ. Խանդաղյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. 2-րդ հազարամյակում, Երևան, 1967, աղ. XVIII (աղյուսակում տրված է մեկական օջախիկ-պատվանդաններ Շրեշ-բլուրից, Բջնիից, Խորոմբուլաղից, Շենգավիթից), նույնի՝ Էլար-Դարանի, նկ. 41, 44, 46, 63 և աղ. IV—5, V—2, IX—1։ Մեծ քանակությամբ օջախիկ-պատվանդաններ

Դամբարանների մանրակրկիտ հետազոտումները ցույց են տալիս, որ, երբ ննջեցյալը կծկված վիճակում դրվել է թաղման խցում և դասավորվել է թաղման դույքը, դրանից հետո հողով ծածկվել է դիակը և գույքը, որից հետո լցվել է մոխիրը։ Ինչպես տեսանք, հիմնահողային թաղումով երրորդ խմբի դամբարանների մի մասում անմիջապես թաղման վրա էր գտնվում քարի լիցքը (աղ. I, նկ. 4)։ Այս հանգամանքները թույլ են տալիս հիմնահողային թաղումով դամբարաններում թաղման խցի մինչև մոխրաշերտը և անմիջապես թաղումը ծածկող քարի լիցքը ընկած տարածությունը կոչել թաղման շերտ։ Մանավանդ որ սա, այսպես ասած, այն մակարդակն է, որտեղ գտնվում է դիակը և կանոնավոր դասավորված թալան գույքը (աղ. I, նկ. 1, 2, 4)։

Պեղված դամբարանների մի մասում դամբարանտփոսի և դամբարանթմբի լիցքի մեջ կային կարմիր գույնի խեցեղենի բեկորներ (աղ. I, նկ. 2)։ Սա, ինչպես ասվեց, կապ ունի կուր-արաքսյան մշակույթը կրողների հոգևոր պատկերացումների հետ և պատահական երևույթ չէ։ Կարմիր գույնի խեցեղենը կապվում է արևի, կրակի պաշտամունքի հետ։ Ենթադրում ենք, որ այս գույնի կավամանները ջարդվել են հուղարկավորման ծեսերի ժամանակ և նրանց մի մասն է լցվել դամբարանների հողի լիցքի մեջ, իսկ մի մասն օգտագործվել է մեզ առայժմ անհայտ նպատակներով։

Պեղված դամբարաններում նկատված ամենաուշադրավ և կարևոր փաստերից է տղամարդկանց և կանանց [թաղումներում] կմախքների տարբերակված թաղման դիրքերը (աղ. II, նկ. 1 և 2)։


2
3
Գ
Ա
Կ
Գ
Ա
Կ
Գ
Ա
Գ
Ա
Գ
Ա

№ 11 դամբարանում բացակայում էր կմախքը։ Դամբարանում հայտնաբերվեց մեկ բրոնզե օղ, կավամաններ և երկու մարդկային դանգեր, որոնց ծնոտի մասերը չկային։ Գանգերը դրված էին դամբարանի հարավ-արևմտյան եզրում, իրար կողքի։

Տղամարդկանց և կանանց տարբերակված դիրքով թաղման սովորույթը Անդրկովկասում նկատվում է նաև ավելի ուշ շրջանի թաղումներում։ Այսպես, 1976—1979 թթ. Վրաստանում, Մեծ Մցխեթում կատարված պեղումների ժամանակ բացվել են վաղ հելլենիստական շրջանի 170 հիմնահողային և քարարկղային թաղումներով դամբարաններ, որոնց մեծ մասը ունեցել են հարավ-հյուսիս ուղղվածություն։ Քարարկղային դամբարաններում տղամարդկանց թաղումներում կմախքը աջ կողքի վրա է եղել, իսկ կանացի թաղումներում՝ ձախ[7]։

Տղամարդկանց և կանանց թաղումներով դամբարաններում կմախքների տարբերակված դիրքերը անշուշտ կապված են ծագող և մայր մտնող արևի պաշտամունքի հետ։

Թաղման ծեսի անբաժանելի մաս են կազմում նաև գամբարանախցերում դրված կավամանները։ Հատկանշական է, որ դամբարաններում դրվել են կենցաղում օգտագործվող առաջին անհրաժեշտության իրեր՝ կճուճներ, քրեղաններ և գավաթներ։ Սա ցույց է տալիս, որ կուր-արաքսյան մշակույթը կրողների մեջ ձևավորվել էր հանդերձյալ կյանքի գոյության մասին հավատը։

Պեղված դամբարանների դամբարանախցերում կավամանները ունեին այնպիսի դասավորություն, ինչպիսին ունեն կուր-արաքսյան մշակույթի՝ պեղված մեզ հայտնի դամբարանադաշտերի դամբարանները։ Պեղված 22 հիմնահողային թաղումներով դամբարաններից յուրաքանչյուրում դրված էր մեկից մինչև հինգ կավամաններ։ Քանի որ պեղված դամբարանների մեծ մասում թաղման սովորույթը նույնն է, իսկ հայտնաբերված նյութերը դամբարաններում կրկնում են իրար և հիմնականում համաժամանակյա են, ուստի մենք անհրաժեշտ չենք համարում բոլոր դամբարանները և դամբարանային նյութերն այստեղ ներկայացնելու։

№ 17 և № 3 դամբարաններում, որոնցից առաջինում կատարված էր տղամարդու, իսկ երկրորդում՝ կնոջ թաղում, անմիջապես կմախքների դիմային մասերում տեղադրված էին հնգական կավամաններ՝ մեկական կճուճներ, երկուական քրեղաններ ու գավաթներ (աղ. II, նկ. 1 և 2)։

Կճուճները մեկ կողմում ունեն հարուստ զարդաձևեր։ Ուշագրավ է, որ այս կավամանները դամբանախցերում դրված էին այնպես, որ զարդարված կողմով նայում էին հարավ։ Այս հանգամանքը թույլ է տալիս եզրակացնելու, որ դա կապվում է արևի պաշտամունքի հետ, և պատահական չէ, որ զարդապատկերների հիմնական տարրը պարույրն է, որը կապվում է արևի պաշտամունքի հետ։

№ 17 դամբարանից հայտնաբերված ամենակարևոր իրը թերևս արծաթյա օղն է։

№ 3 դամբարանից հայտնաբերվել է նաև մեկ բրոնզե մատանի, որը երկգալար է, դալարները ծայրերում նեղանում են և կտրվածքում ունեն կիսալուսնի տեսք։ Այստեղից գտնվել են նաև երկու բրոնզե օղեր։

Ընդհանրապես այս երկու դամբարանների կավամանների դասավորությունը հատուկ է գրեթե բոլոր դամբարանների համար։ Բացառություն էին կազմում երկու դամբարաններ։ № 5-ում կմախքի դիմաց, դեմքի մոտ դրված էին մեկ կճուճ և քրեղան։ Կճուճի մոտ դրված էին երկու գավաթ, իսկ մեկ

---

[7] А. М. Апакидзе, В. В. Николаишвили, А. Н. Сихарулидзе, Т. В. Джгарква, М. С. Дзнеладзе, В. Г. Садрадзе, Г. Н. Манджгаладзе, Г. Д. Вигунашвили, Археологические исследования на новостройках Великой Мцхета (1976—1979 гг.) (Археологические исследования на новостройках Грузинской ССР, Тбилиси, 1982, с. 108).

դավաթը դրված էր ոտքի թաթի մոտ, ուր ուղղված էր ձախ ձեռքը։ Դամբա-
[illegible] ամբողջն նոսկից պատրաստված խիզի գլուխ։

Այս դամբարանում, որտեղ կատարված էր կնոջ թաղում, ոտքի թաթի մոտ գավաթի առկայությունը և դեզի այն ձեռքի ուղղվածությունը մի անգամ ևս ցույց են տալիս, որ դամբարաններում կմախքների դիրքերը, ձեռքերի ուղղվածությունները (դրված են գլխի տակ, պարզված են առաջ կամ ուղղված դեպի ոտքերը) և. կավամանների դասավորությունները իմաստավորված են և պատահական չեն։



Աղ. III

№ 19 դամբարանում, որտեղ ևս կնոջ թաղում էր կատարված, հայտնաբերվեցին երկու կավամաններ։ Մեկ գավաթ դրված էր գանգի ետևի կողմում. իսկ գանգի առջևի մասում՝ աջ ձեռքի վրա, դրված էր մեկ փոքր քրեղան։ Սա սև փայլով, դուրս ճկված կլորավուն շրթով, երկու կեղծ ունկերով, փոքր հատակով կավաման է, որի շուրթի տակով անցնում է երկրաչափական և ցանցաձև զարդանախշերով գոտի։ Կավամանը իրանի մասում զարդարված

և թոնապատկերներով։ Դամբարանում հայտնաբերվեցին նաև երկու բրոնզե օղեր (աղ. V, նկ. 12 և 13), որոնք գտնվեցին անմիջապես ձեռքի տակ և մեկ ոսպարանջան, որը հագցված էր ննջեցյալի աջ ձեռքին։

Ինչպես վերը ասվեց, № 13 դամբարանը կմախքի ուղղվածության տեսակետից [illegible] բացառություն էր կազմում, որտեղ ննջեցյալը դեմքով ուղղված էր հարավ։ Այս դամբարանը յուրահատուկ է նաև իր նյութերով, որոնք չեն կրկնվում մյուս դամբարաններում։ Այստեղից հայտնաբերվել են երեք կավամաններ, երկուսը քրեղան, իսկ մյուսը գավաթ։ Այս կավամանները (աղ. III, նկ. 11—13) ունեն շուրթից սկսվող ուղղահայաց աղեղնաձև կանթեր։ Շուրթից սկսվող ուղղահայաց կանթերով կավամաններ հայտնաբերվել են նաև Վրաստանի Օնի բնակավայրի № 1, 2 և 3 մանկական թաղումներով դամբարաններից[9], որոնք թվագրվում են III հազարամյակի կեսով[10]։ Այս դամբարանից գտնվեց դեպի ներս թեքվող պարույրներով բրոնզե սակրաձև հանգույց (աղ. IV, նկ. 9), որի նմանը հայտնաբերվել է նաև Վրաստանի Կոռետի հնավայրից[11]։



Աղ. IV

Դամբարանից հայտնաբերվել է նաև բրոնզե օղ (աղ. V, նկ. 8), սագաթից և սպիտակ շաղախից ուլունքներ (աղ. VI, նկ. 5)։ Այստեղ հայտնաբերված

[8] Թոնապատկեր կավամանների բեկորներ մեծ քանակությամբ հայտնաբերվել են ՀՀ-ի հյուսիս-արևմտյան մասի հուշարձաններից՝ Կառնուտից, Հառիճից (տե՛ս Т. С. Хачатрян, Древняя культура Ширака, Ереван, 1975, рис. 7, 21 и 24).

[9] Л. Г. Жоржикашвили, Э. Гогадзе, Памятники Триалети эпохи ранней и средней бронзы, Тбилиси, 1974, табл. 29 рис. 121, 127, 131.

[10] Նույն տեղում, էջ 4։

[11] Б. А. Куфтин, Археологическая маршрутная экспедиция 1945 года в Юго-Осетию и Имеретию, Тбилиси, 1949 табл. LXVIII.

նյութերի մեջ ամենակարևորը թերևս կապույտ ջնարակով երկու կլորավուն ուլունքներն են, (աղ. VI, նկ. 4), որոնք եզակի են, առաջին անգամ են հայտնաբերվում Հայաստանի տարածքի համաժամանակյա հուշարձաններից։

Ջնարակված երկարավուն, գլանաձև ուլունք հայտնաբերվել է նաև Ադրբեջանի Իաբա-Դերվիշ հուշարձանից[12]։

Դամբարաններից հայտնաբերված կավամանները, ինչպես ասվեց, երեք տեսակի են՝ կճուճներ, քրեղաններ և գավաթներ։ Կճուճների մեծ մասը իրանի և վզի մասերում ունեն երկուական կիսագնդաձև կանթեր։ Որպես կանոն, այս տեսակի կավամաններն ունեն հարուստ զարդապատկերներ։ Զարդարված են միայն մեկ կողմից՝ վզի և իրանի մասերում։ Սրանց իրանի վերին մասերով և վզերի հիմքերով անցնում են զարդաժապավեններ՝ կազմված եռանկյունների, շեղանկյունների, գծերի ու կետգծերի համադրությամբ։ Կճուճների վզերի և իրանների վրայի զարդապատկերների հիմնական տարրերն են սակրաձև կիսալուսինը, երկծայր կարթաձև նախշը, շեղանկյունին, պարույրը, երկպարույր սակրանախշը, թռչնապատկերը, կենդանին[13]։ Ամենաբարդ կոմպոզիցիաները կազմված են շեղանկյունների ու նրանց շուրջը դասավորված երկպարույր սակրանախշերի, պարույրների և թռչնապատկերների համադրությամբ։ Ուշագրավ է № 10 դամբարանից հայտնաբերված կճուճը, որը վզի մեկ կողմում ունի չորս սակրաձև զարդապատկերներ։ Այս տեսակի զարդապատկերով կարմիր գույնի կավանոթի վզի մաս հայտնաբերվել է Բաբա-Դերվիշից[14]։ Անպարույր և երկպարույր սակրաձև զարդապատկերը բավականին տարածված է։ Այս զարդաձևով կավամաններ ու կավամանների բեկորներ հայտնի են Շուլավերից[15], Կառնուտից[16], Հառիճից[17], Շենգավիթից[18], Շրեշ-բլուրից[19], Ամիրանիս-բլուրից[20]։

Դամբարաններից հայտնաբերվել են նաև բավականին քանակությամբ տարբեր չափերի քրեղաններ և գավաթներ, որոնք հիմնականում աղ. III-ում տրված քրեղանների և գավաթների ձևն ունեն։ Դամբարաններում հայտնաբերված բոլոր կավամանները սև գույնի են, փայլեցված, բացառությամբ № 13 դամբարանից հայտնաբերված միականթ, լայն հատակով կավամանը, որն ունի դեղնակարմրավուն գույն (աղ. III, նկ. 12)։

Պեղված հիմնահողային թաղումներով դամբարաններից հայտնաբերվել են 39 միավոր մետաղյա իրեր՝ 36-ը բրոնզից, 3-ը արծաթից։

Ուշագրավ է հատկապես № 18 դամբարանից հայտնաբերված դաշույնը (աղ. IV, նկ. 1), որը լայն տարածում ունի կուր-արաքսյան մշակույթում։ Մեկ այլ դաշույն գտնվել է ջրամբարի հյուսիսային կողմից՝ Կկվի յալ վայրից, որը սակայն թվագրվում է ուշ շրջանով և պատկանում է միջին բրոնզի ժամանակաշրջանին (աղ. V, նկ. 24)։ Մնացած մետաղյա իրերը զարդեր են՝ մեկ մատանի (աղ. V, նկ. 1), քսան բրոնզե (աղ. V, նկ. 2—8, 11—14, 16—23)[21] և երեք արծաթե օղեր (աղ. V, նկ. 9, 10, 15), չորս երկկոնիկ ուլունք-

12 И. Г. Нариманов, Г. С. Исмайлов, Акстафачайское поселение у г. Казах. (Советская археология (այսուհետև СА), 1962, № 4, рис. 3—6).

13 Կենդանու պատկերներ կան նաև Շենգավիթից հայտնաբերված կավամանների վրա (տե՛ս Ս. Հ. Սարգսյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, աղ. LX)։

14 Г. С. Исмайлов, նշվ. աշխ., աղ. XVII, 3:

15 К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили, Древние культуры Южного Кавказа (V—III тыс. до н. э.), Л., 1970, рис. 53.

16 Т. С. Хачатрян, նշվ. աշխ., նկ. 7:

17 Նույն տեղում, նկ. 22 և 23։

18 Ս. Հ. Սարգսյան, նշված աշխ., աղ. L, նկ. 4։

19 Նույն տեղում, աղ. XVIII, նկ. 4։

20 К. Х. Кушнарева. Т. Н. Чубинишвили, նշվ. աշխ., նկ. 21-ի 15։

21 Հայտնաբերված օղերից մեկը № 2 դամբարանի նյութերի հետ միասին հանձնվել է Հայաստանի ազգագրության պետական թանգարան։ Նյութերը գտնվում են Հայաստանի պատմության պետական թանգարանի ֆոնդերում։

ներ (աղ. VI, նկ. 1), երկու սակրաձև կախիկներ, որոնցից մեկը անպարույր է (աղ. V, նկ. 8 և աղ. VI, նկ. 2), իսկ մյուսն ունի դեպի ներս ծալվող պարույրներ (աղ. V, նկ. 9 և աղ. VI, նկ. 3), մեկ երկար, երկկոնիկ ուլունք (աղ. VI, նկ. 7) մեկ երկար, յոթ գալատով ուլունք (աղ. VI, նկ. 7) վերջապես մեկ փոքր, եռաստալար, նեղացող ծայրերով ուլունք (աղ. VI, նկ. 3)։

Բրոնզե զարդերի մեջ ուշադրավ են № 8, 19 և 23 դամբարաններից հայտնաբերված ապարանջանները։ № 8 դամբարանից հայտնաբերված ապարանջանը քառադալար է, դալարները տափակավուն են, ծայրերում նեղացող, իսկ № 19 դամբարանից հայտնաբերվածը եռադալար է։ № 23 դամբարանից հայտնաբերվել է երկու ապարանջան, որոնցից մեկը եռադալար է, իսկ մյուսը բազմադալար։

Ապարանջանների գալարները ներսի կողմից տափակավուն են, իսկ դրսից՝ կսրավուն, կտրվածքում ունեն կիսալուսնաձև տեսք։ Այս տեսակի պարուրաձև փաթաթվածքով ապարանջանները հայտնի են Էլարից[22], Կվաշխելերեից[23], Օձնիից[24]։

Բացի վերը ներկայացված զարդերից, № 22 դամբարանից հայտնաբերվել է մեկ կախիկ-հմայիլ (աղ. VI, նկ. 8), որը ջարդված է և հավանաբար ունեցել է կիսալուսնաձև տեսք։ Կիսալուսնաձև տեսքով կախիկ-հմայիլներ հայտնի են Էլարի վաղբրոնզեդարյան դամբարանադաշտից[25]։ № 22 դամբարանում գտնվել է նաև երկու կվարցե սպիտակ, թափանցիկ ուլունքներ (աղ. VI, նկ. 10)։ № 23 դամբարանից գտնվել են սպիտակ շաղախից պատրաստված 17 ուլունքներ (աղ. VI, նկ. 11), իսկ դամբարանադաշտի ավերված մասից մեկ տափակավուն, սաղաֆից պատրաստված կախիկ, որը կենտրոնում ունի անցք։ Այս տեսակի կախիկներ հայտնի են Վրաստանից[26] և Ադրբեջանից[27]։

Դամբարանային նյութերից արժեքավոր է նաև № 24 դամբարանից գտնված դնտաքարից պատրաստված մուրճը, որը կենտրոնում ունի անցք՝ կոթն ամրացնելու համար։

Պեղված հիմնահողային թաղումներով դամբարանների նյութերի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ այն պատկանում է կուր-արաքսյան մշակույթի III փուլին և կարելի է թվագրել մ. թ. ա. 2400—2300 թթ.-ով։

Այս դամբարաններում հայտնաբերված որոշ նյութեր առնչվում են պաշտամունքի հետ։ Երկու կանացի թաղումներով դամբարաններից հայտնաբերված բրոնզե կախիկները անշուշտ առնչվում են լուսնի պաշտամունքի հետ, երկու պարույրներով կախիկը՝ լիալուսնի, իսկ կիսալուսնաձևը՝ կիսալուսնի։ Կիսալուսնի պաշտամունքի հետ է առնչվում նաև կախիկ-հմայիլը։

Դամբարաններում կատարված թաղման ծեսը, մետաղյա պաշտամունքային առարկաները, կավամանների պաշտամունքային դրվագազարդ մոտիվները ցույց են տալիս, որ կուր-արաքսյան մշակույթը կրողների հոգևոր պատկերացումներում և պաշտամունքի մեջ կարևոր տեղ են գրավել հիմնականում արևը, լուսինը և կրակը։ Ընդ որում, որպես երկու դիցավոր աստվածներ հանդես են եկել Արևը և Լուսինը։

Բերքաբերի դամբարանադաշտում պեղված դամբարանային նյութերից գիտական մեծ արժեք են ներկայացնում հատկապես № 14 և № 15 քարարկ-

---

22 Է. Վ. Խանդաղյան, Էլար-Դարանի, աղ. VIII, նկ. 3, 4։

23 К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили, նշվ. աշխ., նկար. 26-ի 3։

24 Л. Г. Жоржикашвили, Э. М. Гогадзе, նշվ. աշխ., աղ. 25-ի 80։

25 Է. Վ. Խանզադյան, Էլար-Դարանի, նկ. 56։

26 Л. Г. Жоржикашвили, Э. М. Гогадзе, նշվ. աշխ., աղ. 29, նկ. 129։ Այս կախիկը հայտնաբերվել է Օձնիի հուշարձանի № 2 մանկական թաղումով դամբարանից։

27 И. Г. Нариманов, Г. С. Исмайлов, նշվ. աշխ., նկ. 3-ի 7։

ղային թաղումներով դամբարաններից հայտնաբերվածները։ Այս դամբարաններից № 14-ը (աղ. I, նկ. 6) գրեթե հիմնականում ավերվել էր և պահպանվել էր միայն հարավային անկյունը, որտեղից գտնվեցին երեք երկկոնիկ գավաթներ (աղ. IV, նկ. 2—4)։

Այս երկու քարարկղային թաղումներով դամբարաններից ուշագրավ է հատկապես № 15 դամբարանը։ Չնայած այս դամբարանը ևս ավերվել էր, բայց պահպանված մասում մնացել էին բավականին քանակությամբ կավամանները և կավամանների բեկորներ։ Դամբարանում հայտնաբերվեցին նաև մարդկային ոսկորների մնացորդներ, որոնք այրված էին և դամբարանաբացում դասավորված էին անկանոն ձևով։ Այս հանգամանքը թույլ է տալիս եզրակացնելու, որ մինչև դամբարան դնելը կմախքը (կամ կմախքները) այրված վիճակում է եղել։ Այս քարարկղից հայտնաբերվեց երկու բավականին մեծ, երկկանթ կճուճ, որոնցից մեկն ունի ուղիղ պատեր, լայն բերան, ուղիղ շուրթ և գորշավուն գույն։ Մյուս կճուճը սև գույնի է, թույլ փայլեցված, ունի ուռուցիկ, անզարդ իրան, աստիճանաբար նեղացող հատակ և կարճ վիզ։ Դամբարանում իրար վրա դրված, չարդված վիճակում գտնվեցին երկու քրեղանատիպ կավամաններ, որոնք ունեն դեղնակարմրավուն գույն։ Այս կավամաններից մեկը ունի ուղիղ շուրթ, լայն բերան և բավականին մեծ հատակ։ Մյուս կավամանը ևս ունի ուղիղ շուրթ և լայն բերան, աստիճանաբար դեպի ցած նեղացող, մի փոքր ուռուցիկ իրան, փոքր հատակ։ Այս կավամանը իրանի միջին մասում ունի մեկ կանթ։ Առաջին կավամանից հայտնաբերվել է նաև Նախիջևանի Քյուլ-թափա հուշարձանի երկրորդ շերտից[28], իսկ երկրորդից Գառնիի կուր-արաքսյան մշակույթին պատկանող շերտից[29]։

№ 15 քարարկղի հայտնաբերված կավամաններից թերևս առավել արժեքավոր են երկկոնիկ գավաթները։ Այստեղ գտնվել են հինգ այս տեսակի գավաթներ, որոնցից երեքը տրված են աղ. IV-ում (5—7)։ Գավաթները կանթերի հակադիր կողմերում ունեն ակոսագծերով արված զարդապատկերներ՝ կազմված թռչունի, պարույրի, երկրաչափական զարդանախշերի և կետ գծերի համադրությամբ։ Այս տեսակի երկկոնիկ գավաթ հայտնաբերվել է Վրաստանի հարավ-արևելյան շրջանից, Թրիալեթից[30]։ Թրիալեթում Կուֆտինի կողմից պեղվել են չորս դամբանաբլուրներ[31], որոնց նյութերը համաժամանակյա են Բերքաբերում պեղված քարարկղների նյութերին և թվագրվում են կուր-արաքսյան մշակույթի վերջին փուլով[32]։ Այս դամբարաններից գտնված կավամանները իրենց վրայի զարդաձևերի հորինվածքով և կատարման ձևերով կապվում են Բերքաբերի № 14 և № 15 դամբարաններից հայտնաբերված նյութերի հետ, որոնք փաստորեն ներկայացնում են կուր-արաքսյան նյութական մշակույթն իր զարգացման ամենավերջին աստիճանով։ Մեր կարծիքով այս նյութերը կարելի է թվագրել վաղ բրոնզ III-ի վերջին փուլով՝ 2200—2000 թթ.։ Սա այն շրջանն է, երբ կուր-արաքսյան մշակույթին պատկանող բնակատեղերի վրա ուժեղանում են հարձակումները այլամշակույթ ցեղերի կողմից, իսկ նախկին բնակիչները աստիճանաբար լքում են իրենց բնակավայրերը։

№ 15 դամբարանում հայտնաբերված մարդկային ոսկորների այրված լինելը թույլ է տալիս մեզ եզրակացնելու, որ բնակավայրի վրա կատարվել

---

28 О. А. Абибулаев, Остатки жилищ во втором слое поселения Кюл-тепе, около Нахичевани (Труды Азербайджанской экспедиции. Материалы и исследования по археологии СССР, № 125, М.—Л., 1965, табл. II, 9).

29 Է. Վ. Խանզադյան, Գառնի, IV, նկ. 60։

30 Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, т. I, 1941 табл. CXIV (рис. 114).

31 Նույն տեղում, դամբ. № IV, XIII, XIX, XXIV։

32 Л. Г. Жоржикашвили, Э. М. Гогидзе, Նշվ. աշխ., էջ 4։

է հարձակում, որի հետևանքով վառվել է այն, իսկ մոխրակույտի տակ մնացած կմախքները հավաքվել են հարձակումից հետո և թաղվել։ Մեր այս ենթադրությունը հաստատում են 1986 թ. Երևանի պետական համալսարանի հնագիտական գիտահետազոտական լաբորատորիայի արշավախմբի կողմից նշված երկու քարարկղներից շուրջ 100 մետր հեռավորության վրա գտնված երեք քարարկղային թաղումներով դամբարանների պեղումները։ Այս դամբարանները գտնվում էին բլրի լանջին և շարք էին կազմում[33]։

Առաջին դամբարանում հայտնաբերվել է հիսունից ավելի տարբեր տարիքի մարդկանց կմախքներ և վաթսունից ավելի կավամաններ[34]։ Պեղումների ղեկավարների կարծիքով այս դամբարանը եղել է տոհմի կամ չբաժանված ամուսնական ընտանիքի դերեզմանոց, որտեղ իբր պարբերաբար կատարվել են թաղումներ[35]։ Սակայն մեր կարծիքով այս դամբարանը եղել է ոչ թե տոհմի դերեզմանոց, որտեղ պարբերաբար թաղումներ են կատարել, այլ այստեղ փաստորեն մենք գործ ունենք այլ երևույթի հետ, որը հաստատում են նաև այստեղ պեղված երկրորդ և երրորդ դամբարանների պեղումները։ Երկրորդ դամբարանի թաղման խուցը, որտեղ կային երկու կմախքներ, հողի տիզքի հետ, որը վառված էր, խառը լցված էր մեծ քանակությամբ մոխիր, որը պեղումների ղեկավարներին թույլ էր տվել եզրակացնելու, որ այս դամբարանի վրա վառվել է մեծ խարույկ, որի հետևանքով կմախքներից մեկը այրվել է, իսկ կավանոթները տեղում ճաքել և բեկորների են բաժանվել[36]։ Ըստ նրանց, դամբարանի պատերի վերին հատվածները կառուցված են եղել հում աղյուսներով, որոնց այրված բեկորները մեծ քանակությամբ հանդես էին գալիս դամբարանի ներսից[37]։ Մոխրի և փայտածխի մնացորդներ կային նաև երրորդ դամբարանում։

Այս երեք քարարկղային թաղումներով դամբարանների նյութերը, որոնց մեջ մեծ քանակություն էին կազմում մեր կողմից պեղված № 14 և № 15 դամբարանների երկկոնիկ գավաթների տեսակի կավամաններ, մեր կարծիքով համաժամանակյա են այդ դամբարանների նյութերի հետ։

Այստեղ ևս մենք գործ ունենք բնակատեղիի վրա կատարված մեծ հարձակման հետ, որի հետևանքով մեծ քանակությամբ մարդկային զոհեր են եղել, այրվել են տները, որի այրված փլատակների տակ մնացել են մարդկանց վառված մարմինները։ Թշնամու հեռանալուց հետո դիակները հավաքվել են և թաղվել միասին, որը պարզ երևում էր առաջին դամբարանից, որտեղ թաղվել էին նաև բավականին քանակությամբ հղի կանայք, որոնց կմախքների որովայնի մասերում հայտնաբերվեցին երեխաների գանգեր։ Իսկ այն մարմինները, որոնք մնացել են վառված տների փլատակների տակ, հանվել են ավելի ուշ և թաղվել երկրորդ և երրորդ դամբարաններում։ Երկրորդ դամբարանում թաղված դիակները ամբողջովին վառված են եղել, որի հետևանքով հավաքվել է մոխրախառն հողի հետ և լցվել դամբարանախուցը։ Այստեղ մեծ քանակությամբ հայտնաբերված չթրծված կավի մնացորդները թույլ են տվել եզրակացնելու, որ դամբարանի պատերի վերին հատվածները շարված են եղել հում աղյուսներով։ Մինչդեռ դամբարանի ներսում չթրծված կավի մնացորդները ցույց են տալիս, որ դամբարանում թաղվել է կավագործ, որի դիակը գտնվել է իր արհեստանոցի փլատակների մեջ։ Վառվելուց քայ-

---

33 Գ. Ե. Արեշյան, Հ. Ե. Սիմոնյան, Ս. Ե. Գասպարյան, Նորահայտ դամբարաններ Ջոզազում (Հայկական ՍՍՀ-ում 1985—1988 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Երևան, 1987, էջ 7)։

34 Նույն տեղում։

35 Նույն տեղում։

36 Նույն տեղում, էջ 8։

37 Նույն տեղում։

քայված և մոխրացած լինելու պատճառով դիակի մնացորդների հետ միասին հավաքվել է նաև շրջակա հողն ու մոխիրը ևս և լցվել դամբարանախուցը։ Այստեղ լցված հողի և մոխրի հետ էլ դամբարանախցում հայտնվել են կավամաններ պատրաստելու համար արված չթրծված կավի գնդեր, ինչպես և նոր պատրաստված իրերից առաջացած թափոններ։ Այստեղից հայտնաբերված կավի կտորները լավ հունցված են եղել և բարձր որակի, որը ևս ցույց է տալիս, որ այն չէր կարող չթրծված աղյուսի մնացորդներ լինել։

Բերքաբերի կուր-արաքսյան մշակույթի դամբարանադաշտում պեղված այս հինգ քարարկղային թաղումներով դամբարանների նյութերը, հատկապես երկկոնքի գավաթները, ակնհայտորեն կրում են այլ մշակույթի ազդեցության հետքեր։ Հենց այս տեսանկյունից վերցրած, սրանք ունեն լուրջ գիտական արժեք՝ կապված կուր-արաքսյան մշակույթի որոշ առեղծվածային հարցերի լուծման հետ։

Ինչպես հայտնի է, մ. թ. ա. III հազարամյակի վերջերին կուր-արաքսյան մշակույթի բնակատեղիների մեծ մասում կյանքը գրեթե ընդհատվում է, որի հիմնական պատճառները դեռևս վերջնականապես ճշտված չեն։ Այս մասին կան մի քանի իրարամերժ կարծիքներ կամ տեսակետներ[38]։

Բ. Բ. Պիոտրովսկին դեռևս 50-ական թթ. այն տեսակետն է արտահայտել, որ Անդրկովկասում, կապված հեռագնաց անասնապահության զարգացման հետ, կյանքը էնեոլիթյան (վաղբրոնզեդարյան) երկրագործական ցածրադիր բնակատեղիներում դադարում է և այդ շրջանների բնակիչները տեղափոխվում են լեռնային մարգագետինները։ Կյանքը այս բնակատեղիներում վերսկսվում է կապված երկրագործության զարգացման երկրորդ փուլի հետ, արդեն մ. թ. ա. I հազարամյակում[39]։ Պիոտրովսկին իր մեկ այլ հոդվածում այն տեսակետն է հայտնում, որ Անդրկովկասում էնեոլիթի (վաղբրոնզեդարյան) մշակույթի հիմքի վրա աճում է անասնապահական ցեղերի հարուստ մշակույթ (Կուրգան, Թրիալեթի, Կիրովական)[40]։

Պիոտրովսկու արտահայտած տեսակետները մնալ են և չեն կարող հիմք հանդիսանալ մ. թ. ա. III հազարամյակի կուր-արաքսյան մշակույթի բնակատեղիներում կյանքի դադարելը պարզաբանելու տեսանկյունից։

Կուր-արաքսյան մշակույթի բնակատեղիներում կյանքի ընդհատման վերաբերյալ երկրորդ տեսակետն այն է, որ կապված բնական աղետի, այսինքն՝ կլիմայի վատացման, տեսական երաշտի հետ, կուր-արաքսյան մշակույթի կրողները թողնում են իրենց երկարատև բնակության վայրերը՝ մի մասը ուղևորվում է արևմուտք, իսկ մի մասը՝ Կովկասի լեռնային և բարձր լեռնային շրջանները[41]։

Մեր կարծիքով կուր-արաքսյան մշակույթի բնակավայրերում կյանքի ընդհատվելը կամ այս մշակույթի դադարելը գոյություն ունենալ ևս տարածման շրջաններում, կապված չէ բնական աղետի, այսինքն, կլիմայի վատացման կամ երաշտի հետ և սխալ տեսակետ է։

Կուր-արաքսյան մշակույթի անհետացման մասին հետաքրքիր տեսակետ ունի անգլիացի գիտնական Լ. Վուլլին։ Ըստ նրա, կուր-արաքսյան մշակույթը կլոր էթնիկ տարրերը կամ ավելի ճիշտ մի ամբողջ ժողովուրդ, ինչ-ինչ պատճառներով թողել է իր հայրենիքը և ուղևորվել է փնտրելու իր նոր հայրենիքը[42]։ Այստեղ ըստ Վուլլիի գործ ունենք մի զանգվածային արտա-

---

38 Այս մասին տե՛ս Р. М. Мунчаев. Кавказ на заре бронзового века, с. 413.

39 Б. Б. Пиотровский. Развитие скотоводства в древнейшем Закавказье (СА, XXIII, М, 1955 с. 6).

40 Б. Б. Пиотровский. Основные этапы древнейшего земледелия в Армении (ВДІ, 1961, № 3—4, էջ 120).

41 Р. М. Мунчаев, նշվ. աշխ., էջ 413:

42 Л. Вулли, նշվ. աշխ., էջ 101:

դաղթի հետ, որը կարևոր դեր է խաղացել Միջին Արևելքի պատմության մեջ[43]։ Ըստ նրա, այս արտագաղթը տեղի է ունեցել դուրս մղման հետևանքով և պարզ է, որ կուր-արաքսյան մշակույթի բնակատեղիները ենթարկվել են նոր, հավանաբար զարգացած անասնապահական մշակույթ ունեցող ցեղերի ներխուժումների։

Կուր-արաքսյան մշակույթը միանգամից չէ, որ վերացել, անհետացել է։ Այն մշտապես ենթարկվել է պարբերաբար կրկնվող հարձակումների այլ էթնիկ տարրերի կամ այլամշակույթ ցեղերի կողմից։

Այս ներթափանցումները ուժեղացել են հատկապես ուշ մ. թ. ա. III հազարամյակի կեսերին, որի հետևանքով Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքը ընդգրկող կուր-արաքսյան բնակատեղիները սկսել են նոսրանալ, միաժամանակ սկսվել է նոր նվաճող ցեղերի բնակեցումը, որոնք իրենց հետ բերել են նաև իրենց մշակույթը։

Այս նոր, կուր-արաքսյան բնակատեղիները նվաճող և բնակություն հաստատած ցեղերից են բեդենյան մշակույթը կրող էթնիկ տարրերը, որոնք, ներխուժելով Անդրկովկաս, սկզբում բնակություն են հաստատել Ալազան և Իորի գետերի ավազաններում (հավանաբար նաև Ադրբեջանի հյուսիս-արևմտյան շրջանում)՝ այդտեղից դուրս մղելով նախկին կուր-արաքսյան մշակույթը կրողներին։

Կան նյութական մշակույթին վերաբերող տվյալներ, ինչպիսին Բերքաբերում պեղված հինգ քարարկղային թաղումներով դամբարանների և Թրիալեթում Կուֆտինի կողմից պեղված № IV, XIII, XIX և XXIV դամբանաբլուրների նյութերն են, որոնք ցույց են տալիս, որ միաժամանակ Վրաստանի հարավ-արևելյան, հատկապես Խրամ գետի ավազանի և Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների կուր-արաքսյան բնակատեղիների բնակիչները տնտեսական և մշակութային կապերի մեջ են եղել սկզբնապես Ալազան և Իորի գետերի ավազաններում հաստատված բեդենյան մշակույթը կրող ցեղերի հետ։ Հատկապես այս հուշարձաններում հայտնաբերված երկկոնիկ գավաթները իրենց ձևով և խեցեղենի պատրաստման տեխնոլոգիայով անմիջապես Իորի-ալազանյան մշակույթի ազդեցությունն են կրում։ Մշակութային փոխառնության հետևանք է, անշուշտ, այս մշակույթներում գավաթների վրա՝ կանթերի հակադիր կողմերում փոսիկների առկայությունը։ Բայց հետագայում սկսվել են Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և հյուսիս-արևելյան շրջանների կուր-արաքսյան բնակատեղիների վրա Իորի-ալազանյան հովտում հաստատված ցեղերի կողմից ներխուժումները, որի հետևանքով կուր-արաքսյան մշակույթի բնակավայրերը դատարկվել են, իսկ բնակիչները հեռացել են այլ վայրեր։ Այս նոր մշակույթին պատկանող հուշարձանների առկայությունը Վրաստանի հարավ-արևելյան շրջանում՝ Տետրիծղարոյի շրջանի Բեդենի բնակավայրում, Հայաստանի հյուսիս-արևելյան մասում՝ Իջևանի շրջանի Բերքաբեր գյուղում և վերջերս Ադրբեջանի հարավ-արևմտյան մասում ի հայտ եկածը[44] ցույց են տալիս, որ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան շրջանում կուր-արաքսյան մշակույթի և այդ մշակույթի կրողների անհետացումը կապված է նաև անմիջապես բեդենյան մշակույթը կրող ցեղերի կողմից կուր-արաքսյան մշակույթը կրողների դուրս մղման և նրանց զբաղեցրած տարածքներում հաստատման հետ։ Պետք է ենթադրել, որ այս ցեղերը հաստատվելով Կուր գետի ձախակողմյան մա-

---

43 Նույն տեղում։ Լ. Վուլլիի կուր-արաքսյան մշակույթի անհետացման տեսակետին համակարծիք է նաև Գ. Ա. Մելիքիշվիլին։ Այս մասին տե՛ս Г. А. Меликишвили, Возникновение хеттского царства и проблема древнейшего населения Закавказья и Малой Азии (ВДИ, 1965, № 1, с. 20).

44 Տե՛ս К. Н. Пицхелаури, Археологические исследования в зонах новостроек иоро-алазанского бассейна (Археологические исследования на новостройках. Грузинской ССР, Тбилиси, 1982, с. 57).

սում և Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան մասերում, սկսել են հետագայում հարձակումներ գործել լեռնաշխարհի կենտրոնական մասերի վրա, հասնելով մինչև Արարատյան դաշտ։ Մեր կարծիքով կուր-արաքսյան մշակույթի անհետացման մասին ճիշտ է անգլիացի գիտնական Լ. Վուլլիի տեսակետը։ Հայաստանի տարածքում այս նոր՝ բեռենյան համարվող մշակույթի և կուր-արաքսյան մշակույթի փոխառնչություններն մանրակրկիտ ուսումնասիրումը կհաստատի այս փաստի ճշտությունը և ստույգ դարձնումներ կմտցնի հարցի մեջ։

Ընդհանրապես կուր-արաքսյան մշակույթի մասին եղած տեսակետների մեջ կան թերի, ոչ լիարժեք ըմբռնումներ, որոնք արդյունք են այն բանի, որ այդ մշակույթի ընդգրկման սահմանները գտնվում են տարբեր երկրների տարածքներում։ Տարբեր երկրների և միութենական հանրապետությունների գիտնականները այդ մշակույթը ինչ-ինչ պատճառներով ուսումնասիրում էին ոչ օբյեկտիվորեն, որն էլ ավելի է դժվարացնում այս մշակույթի հետ կապված հարցերի պարզաբանումն ու լուծումը։

Մինչդեռ այս մշակույթը, որի տարածման բուն շրջանները համապատասխանում են Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքին, կարող է բարձր մակարդակի ուսումնասիրման և վիճելի հարցերի պարզաբանման։ Այս մշակույթի հետ կապված պրոբլեմային հարցերի լուծումը մեծ ներդրում կլինի ողջ Առաջավոր Ասիայի այդ ժամանակաշրջանի պատմության և մշակույթի ուսումնասիրման գործում։ Հետևապես, այս մշակույթի ուսումնասիրման, վիճելի հարցերի պարզաբանման և լուծման համար, հարցն ուսումնասիրող գիտնականները պետք է հարցին օբյեկտիվ մոտեցում ցուցաբերեն՝ վեր հանելով պատմական ողջ ճշմարտությունը, դրա համար օգտագործելով հնագույն մշակույթների ուսումնասիրման ողջ փորձը, հավաքված դիտելիքները։ Կուր-արաքսյան մշակույթին վերաբերող վիճելի հարցերի պարզաբանումը և լուծումը կնպաստի նաև այդ մշակույթի ընդգրկած տարածքի հետագա հնագիտական մշակույթների ուսումնասիրմանը։

МОГИЛЬНОЕ ПОЛЕ КУРО-АРАКСКОЙ КУЛЬТУРЫ БЕРКАБЕРА

С. В. ГАСПАРЯН

Резюме

В 1981 г. Институтом археологии и этнографии АН Армении и Государственным музеем истории Армении в селе Беркабер Иджеванского района, на территории Джогазского водохранилища были проведены раскопки. Раскопанные гробницы, принадлежащие куро-аракской и беденской культурам, имеют большую научную ценность. Материалы, выявленные в результате раскопок, датируются концом III—началом II тыс. до н. э. Многие могильные материалы, непосредственно принадлежащие к последнему периоду существования куро-аракской культуры—2200—2000 гг. до н. э., интересны с точки зрения новой интерпретации проблемных вопросов в связи с исчезновением куро-аракской культуры в северных и северо-восточных районах Армянского нагорья.